Վահան Տերյան

Մեղուզա

Անհուսության մեջ, խավար օրերում եկավ նա ինձ մոտ.
Նա ինձ մոտեցավ քնքուշ, փայփայող սիրո խոսքերով,
Շարժումների մեջ և մութ աչքերում կար մի անծանոթ
Վայելքի խոստում՝ անանց հիացման գաղտնիքով գերող:

Ես հավատացի այն ժպիտներին և այն մեղսական
Փայփայանքները բախտ համարեցի իմ մենության մեջ.
Շուրջը գիշեր էր, մռայլ էր շուրջը իմ հոգու նման
Եվ նա էր շողում երազի նման խավարում անվերջ…

Խենթ հիացումով արբեցի նրա տանջող զգվանքում,
Եվ գիրկը նրա թվաց ինձ եղեմ, մեղքը սրբազան…
Օ՛, դառը գիշեր, տանջանք ու թախիծ. իր արնոտ գրկում
Փայփայում էր ինձ և հևհևում էր երկդեմ Մեղուզան: